



## ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

### ԺԱՄԱՆԱԿԻ ԵՎ ԿՅԱՆՔԻ ՏՈՆԸ



մանոր է նորից, և դարձյալ Ս.  
Մեռնդ:

Ուզես եկեղեցի և ժողովուրդ, եր-  
կյալպածորեն, հույսով և սիրով  
բաց ենք անում Գալիքի՝ նոր օրերի և նոր  
կյանքի դրները այն աճկուրում հավատով,  
որ նոր տարին և Քրիստոսի հրաշափառ Ս.  
Մենդյան տոնը պիտի բերեն մեր անկատար  
մեացած երազների, իդերի իրականացումը  
և մեր գործերը պիտի պահպին առավել հա-  
շողուրյամբ:

Ժամանակի և Կյանքի մեծ տոնը իր վրա  
է հրավիրում նաև բովանդակ քրիստոնեական  
աշխարհի խոններն ու զգացմունքները:

Ժամանակի և Կյանքի այս խորհուրդները  
քրիստոնեական մտածման մեջ իրաւ են շաղ-  
կապված սերտորեն և լրացնում են միմյանց:

Աշխարհ միշտ էլ իր որոնումների և տագ-  
նապների մեջ, իր հույսերի և հոգսերի մեջ,  
հավատացել է էլ ավելի արևոտ և էլ ավելի  
ուայծառ գալիք օրերին և հույսով բացել է  
նոր ժամանակների անձանոք դուռը:

Ժամանակի և Կյանքի այս հավերժական  
կապը բովանդակուրյունն իսկ է մեր գոյու-  
րյան և խարիսխը մեր Կյանքի:

Վաղվա նկատմամբ վառ հույսի մեջ է որ  
աշխարհը էլ ավելի է գեղեցկանում և զգաց-

վում է կյանքի վեհուրյունը, նպատակալա-  
ցուրյունը, ժամանակի հավիտենականուրյու-  
նը և կյանքի բերկրանքը:

Անցնող տարին սախում է մեզ անսալ մեր  
խղնմանքի ձայնին և պատասխանատվու-  
թյան խորունկ զգացմունքով խորհրդածել,  
հանրագումարի բերել մեր կյանքից խլված  
օրերի հաշիվը և հարց տալ. «Կյանքն ինձի  
ի՞նչ մնաց»:

Հրաժեշտ ապավ ամեն անգամ անցնող  
տարվան և ողբունելով ամանորը, մարդը  
պարտավոր է նշանի իր կյանքի ուղղուրյունը,  
ուղիսով գալիք օրերը լինեն քե՛ իրեն և քե՛  
իր շրջապատի համար բարիքներով լեցուն և  
օրենուրյուններով բեղմնավոր օրեր:

Մեծագույն բարիքը կյանքի հետ միասին,  
որ տրվել է մարդուն, ժամանակն է:

Պողոս առաքյալը եփլսացվոց բղբի և զիսի  
15-րդ համարում գրում է. «Տեսչիք որպէս  
նշանաւորի գնայցէք, մի՛ իրեւ անիմաստ,  
այլ իրեւ իմաստունք. գնեցէ՛ք զժամանակս,  
զի առաքս շարուրեան են»:

Ուզես կյանքի նոր մատյան, բացվում է  
նոր տարին, և անա մարդը նորից հրավիրվում  
է այդ մատյանը լցնել ազնիվ և բարի գոր-  
ծերով, վեն ու վասմ խոններով ու իդեալներով,

արդյունաշատ աշխատանքով, ի բարօղություն ժաղովրդի, հայրենիքի և մարդկության:

Արդարեւ, մարդու գերազույն կոչումն է «շիփարշնել ժամանակը», անպառազ կերպով շգործել, այլ ժամանակի մեջ ձգտել առավել կյանքի, շահել «գրաւու պատերազմն» (Բ Տիմար. Դ 7):

Ժամանակի տեսակետից ինարկե մին և նոր տարի նույնն են, հավերժական և անփափոխ: Մարդն է որ անցնում է, փոփոխվում ժամանակի մեջ, մինչ մնում է մարդու ազնիվ անունը և բարի գործը:

Ժամանակը նորանում է մարդու մեջ, նրա գործերի, նույների և երազների մեջ: Մարդը անցնում է, բայց մնում է նրա գործը՝ որպես կորող, որպես նիշատակ:

Այս հույսերով և իղձերով և Քրիստոսի Ս. Սննդյան խորհուրդներով ու ավետիսով, «Կրանանք գոները նոր տարիի մը, — ասում է Վեհափառ Հայրապետը նոր տարվա և Ս. Սննդյան իր քարոզի մեջ, — Սենք կուսակորչի կանթեղեն լուս կրերենք ձեղի ամենուդ, որպեսզի հստակ տեսնեք ձեր կյանքի ճամբան, Հայ Եկեղեցու ու ազգի ուղիղ ճամբան: Այդ ճամբան սիրո և միության ճամբան է, Ս. Էջմիածնի Աստվածային օրհնությամբ գծված և նվիրականացած: Հեռու մնացեք անլուս և անհուս ճամբաներեւ, որոնց հիմքը ավագ է ու փոշի, պատրանք և հուսահատությունն:

Ազգային և եկեղեցական տեսակետից, 1962 թվականը Մայր Արքու Ս. Էջմիածնի և Հայաստանյաց Առաքելական Եկեղեցու համար հանդիսացավ պատմական իրադարձություններով հարուստ մի տարի:

Անցնող 1962 թվականին, մեր հայրենի խաղաղ և ապահով պայմանների մեջ, Վեհափառ Հայրապետի ղեկավարության ներքև, Մայր Արքու Ս. Էջմիածնին շարունակեց իր հոգեուր, մշակութային, շինարարական գործունեությունը:

«1962-ի աշնան, Ազգային-Եկեղեցական ժողովը և Սրբալուս Մեռոնի օրհնությունը, — ասում է Վեհափառ Հայրապետը, — փայլուն ապացույց մը հանդիսացան այդ իրողության: Ս. Էջմիածնի մեջ տեղի ունեցող հանդիսությունները պայծառ կերպով ցույց տվին. թե ի՞նչ կնշանակե հայ Եկեղեցին հա-

մար՝ ապրիլ Հայրենի Հարազատ պետության հոգածության տակ՝ խաղաղ, ապահով ու միակամ»:

1962 թվականը եղավ մեր հայրենիքի և ժողովրդի համար հարուստ աշխատանքի, նվաճումների, հաջողությունների մի նոր տարի:

Հայրենիքի ձեռք բերած այդ նվաճումները է՛լ ավելի են ամրապնդում մեր հայրենիքի և ժողովրդի հզրությունը:

Մայր հայրենիքը անցնող տարում լայնության բացակ իր քենցը՝ արտասահմանից ընդունելու համար իր պահպանից զավակների մի սուլար խմբի:

Մեր հայրենիքը և ժողովուրդը նոր տարին դիմավորում են արդար հպարտությամբ, ստեղծագործ և խաղաղ աշխատանքի պայմաններում, մշակույթի, տեսահույսության, գիտության, արդյունաբերության անբնդիալ անման խոստումնալից պայմաններում:

Անցնող տարում է՛լ ավելի անեցին ողջ աշխարհում խաղաղության ուժերը, է՛լ ավելի համախմբվեցին և աշխի բնեկնող հաջողությունների հասան պատերազմը կանխելու իրենց վեռականության մեջ:

«Անցնող 1962 տարին եղավ տարի մը՝ խաղաղության ուժերու առավել միավորման ու առավել ամրապնդման, — ասում է Վեհափառ Հայրապետը, — եղավ տարի մը խաղաղության հաղթանակի: Անցնող տարին ապացուցուց մանավանդ, թե պատերազմը ոչ միայն անխուսափելի չէ, այլ թե՝ խաղաղությունը հնարավոր է»:

Մարդկության բարգավանման, բարեկեցության հիմքը մեայուն խաղաղությունն է, զինարափումը, պետությունների խաղաղ գոյակցություննը: Անա թե ինչ և անցնող տարում պատերազմը կանխելու, խաղաղությունը պահպանելու համար, անդուն կերպով, վեռականուեն և հաստատակամ, պայմանավոր մարդիկ, եկեղեցական մեծ գործիչներ, պետությունների ղեկավարներ և տարբեր ապարեազների մարդիկ:

Նոր տարվա շեմքին և Քրիստոսի նրաշխափառ Ս. Սննդյան տռնին, բռ' Երկրագնդի վրա հաղթանակին խաղաղության, եղրայրության, «ի մարդիկ հանութեան» գաղափար-

ները, որպեսզի ընդմիշտ վերջ արվեն պատերազմի նոր սպառնալիքներին, ոչնչացվեն զանգվածային բնաշնչման մահաբեր զենքերի բռնը պաշարները:

Թո՞ղ 1963 թվականը լինի օրինյալ և երշանիկ տարի:

Թո՞ղ օրինվի նոր տարվա պատկը և բարի ու խաղը տարի լինի բռնը բնամար, բռնը երդիկների տակ. «Օրէնքսի պատկ տարւոյ բաղդրութեան քո»:

«Տեր Աստված Հարցն մերոց, — բարեմարդում է նամայն նայ ժողովրդի նամար՝ ազգին վեհափառ Հայրապետը, — տո՞ւր մեզ դիմա-

դաղություն քո, որպեսզի Միածին Որդվուդի իշման տեղը առավել շենցնենք ու փառավորենք, որպեսզի Հայ ժողովուրդը, իր Հայրենի նվիրական կտուրին տակ, նույն հանձարով ու խանդրով, շարունակի իր ստեղծարար առաքելությունը իրեն եղբայրակից ժողովուրդներու մեծ միության մեջ:

Խաղաղություն, սե՞ր և միություն նաև մեր նկեղեցին ու ազգին, որ ի Սփյուռս աշխարհիա:

Շնորհավո՞ր նոր տարի և Ս. Շնունդ, մեր հարազատ, մեր մոտիկ ու նեռավոր եղբայրներ և բույրեր:

